

ԹԻՎ 34 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N47

«26» փետրվար 2026թ.

ք. Գորիս

ՄԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ՄԱՆԴԱՏԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՋՈՐԴ ԹԵԿՆԱԾՈՒԻՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Միսիան համայնքի ավագանու 2026 թվականի փետրվարի «19»-ի «Միսիան համայնքի ավագանու անդամ՝ Աննա Ռազմիկի Սիմոնյանի ավագանու անդամի լիազորությունները դադարեցնելու մասին» թիվ 18 արձանագրությունը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 141-րդ հոդվածի 8-րդ մասով՝ թիվ 34 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Մ Է .

Միսիան համայնքի ավագանու Հայաստանի Հանրապետական կուսակցության ընտրական ցուցակից ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամի մանդատը տրվում է Հայաստանի Հանրապետական կուսակցության ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու Արփինե Զիվանի Մանասյանին:

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Անդրանիկյան

Նախագահի տեղակալ՝

Դ. Գասպարյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Մ. Բակունց

Անդամներ՝

Ա. Հայրապետյան

Ն. Գրիգորյան

Տ. Ավագյան

Հ. Հարությունյան

